

Մանավանդ որ՝ աստվածաշնչյան ինտերտեքստի դավրիժեցիական կիրառությանը բնորոշ է պատեհ-անպատեհությունը, այսինքն՝ գիտակցված դիմում-հղումների կողքին մեծ թիվ են կազմում սովորույթի ուժով, իներցիայով շարադրանք ներբերված աստվածաշնչյան տեքստի կիրառություններ: Դրանք, ինչպես գրում է Մայիս Ավդալբեգյանը, «ուշ ժամանակների հայացքով անտեղի և անտրամաբանական, սակայն ժամանակին, իբրև միջնադարյան մարդու մտածողության տարր, դարձել են նաև միջնադարյան գրական ստեղծագործությունների անխուսափելի հատկանիշ, առանց որի թերի կլիներ նրա ներգործությունը ժամանակի ընթերցողի և ունկնդրի վրա»³⁰:

Սովորաբար, ինտերտեքստը դրսևորման ընդհանրական երկու հիմնական կերպ ունի, այսպես կոչված՝ բացահայտ և թաքնված: «Գիրք պատմութեանց»-ում գերիշխում է բացահայտ ինտերտեքստը, երբ Աստվածաշունչն օգտագործվում և մեջբերվում է կամ բնագրային ճշգրտությամբ, կամ շատ մոտ բնագրին, իսկ երբեմն առկա է նաև որոշակի-կոնկրետացնող հղում: Ինչպես՝ «...**ըստ գրեցելումն թէ**. «Տէր ցրուէ զխորհուրդս հեթանոսաց, անարգէ Տէր զխորհուրդս ժողովրդոց, և արհամարիէ Տէր զխորհուրդս իշխանաց: Այլ խորհուրդ Տեառն յաիտեան մնայ, և խորհուրդ սրտի նորա յազգէ մինչև յազգ»...» (էջ 183, հղվել է՝ Գիրք սաղմոսաց, ԼԲ, 10-11):

Աստվածաշունչ կամ **Սուրբ Գիրք** գրելու փոխարեն Դավրիժեցին հղումներն անում է կտակարանների մասնավոր կառույցներին, կամ կիրառում այնպիսի փոփոխականներ, որոնք ժամանակին ընկալվել են բացառապես Աստվածաշնչի իմաստով: Ինչպես՝ «**Ըստ գրեցելումն յորէսն**. «Որով և մեղանչէ ոք, նովիմբ և տանջեսցի»» (էջ 84, հղվել է՝ Առակաց, ԺԱ, 17), կամ՝ «...վասն զի ոչ

³⁰ **Մայիս Ավդալբեգյան**, Զայ գեղարվեստական արձակի սկզբնավորումը (Վ դար), էջ 224: